ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

«ԱԲՀ-ԲՄԱՇՁԲ-18/23» ծածկագրով բաց մրցույթով Աբովյան համայնքի կարիքների համար քաղաքային օղակաձև այգու բարեկարգման աշխատանքներ ձեռք բերելու նպատակով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Աբովյան

19/11/2018թ.
ժամը 17:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Գուլոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ջ. Սարգսյան, Լ. Շառաջյան, Վ. Օհանյան, Կ.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Աղաջանյան

Պատվիրատուն՝ Աբովյանի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր. 1 հասցեում, ստորև ներկայացնում է «ԱԲՀ-ԲՄԱՇՁԲ-18/23» ծածկագրով բաց մրցույթով Աբովյան համայնքի կարիքների համար քաղաքային օղակաձև այգու բարեկարգման աշխատանքներձեռք բերելու նպատակով հայտարարված բաց մրցույթով գնման ընթացակարգի գնահատման նիստի մասին համառոտ տեղեկատվություն:

1. **Տվյալներ «ՆԻԿԴԱՎ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ի ներկայացրած հայտի որակավորման պահանջներն ապահովող փաստաթղթերի հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին**
Մ. Գուլոյան

1.1 Հայտնում եմ Ձեզ այն մասին,որ որակավորման պահանջները ապահովող փաստաթղթերում առկա են թերություններ:Մասնավորապես՝

ա) «ՆԻԿԴԱՎ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ի կողմից Մասնագիտական փորձառությունն ապահովող փաստաթղթերում բացակայում է հանձման-ընդունման արձանագրությունը, հաշիվ ապրանքագիրը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

բ) «ՆԻԿԴԱՎ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական միջոցների որակավորման չափանիշներում կա անհամապատասխանություն հրավերով սահմանված <<Տեխնիկական միջոցներ>> որակավորման չափանիշների հետ մասնավորապես ավտոմոբիլային աշտարակի փոխարեն ներկայացված է բեռնատար ավտոկռունկ:

գ) «ՆԻԿԴԱՎ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական միջոցների որակավորման չափանիշների ցանկում բացակայում է անիվներով էքսկավատորի տեխնիկական անձնագիրը::

դ)) «ՆԻԿԴԱՎ ԳՐՈՒՊ» ԲԲԸ–ի կողմից ներկայացված աշխատանքային ռեսուրսների որակավորման չափանիշներում բացակայում է աշխատանքներին ներգրավելու համար այգեգործ Վարդան Սիմոնյանի համաձայնագիրը:

ե) «ՆԻԿԴԱՎ ԳՐՈՒՊ» ԲԲԸ–ի կողմից ներկայացվածաշխատակազմի աշխատանքայինգրքույկները ներկայացված չեն ողջ ծավալով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2.Գնահատող հանձնաժողովի որոշման մասին.
Մ. Գուլոյան

2.1 Հանձնաժողովը որոշեց.
«ՆԻԿԴԱՎ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ինտրամադրել 1 աշխատանքային օր սույն արձանագրության 1.1 կետով սահմանված անհամապատասխանությունները շտկելու համար|:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի օրը և ժամը որոշելու մասին

Մ. Գուլոյան

3.1.Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա նոյեմբերի 21-ին ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովինախագահ՝		Մ. Գուլոյան
Անդամներ՝		Ջ.Սարգսյան
		Լ. Շառաջյան
		Կ.Վարդանյան
		Վ.Օհանյան
Համակարգող		Ս.Աղաջանյան